**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 12.12.2019թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
# ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
# թիվ ԳԲՔԱ-LO-2019/94

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ՝ Ս. Պետրոսյանի
«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով գնանշման հարցում, գեոդեզիական գործիքների, նավիգացիոն սարքերի և աշխատանքային կայանի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 18.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

## 1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը չկայացած համարելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» գնանշման հարցման ծածկագրով ընթացակարգը և փոփոխել տեխնիկական բնութագրերը, համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին՝ բացառելով չհիմնավորված սահմանափակումները, որոնք խոչընդոտում են հնարավոր հայտատուների մասնակցությունը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.11.2019թ.-ին:

19.11.2019թ.-ին գրությամբ ներկայացված բողոքը վերադարձվել է՝ առկա անհամապատասխանությունները շտկելու համար:

Նույն օրը ներկայացված բողոքի շտկված տարբերակը, Բողոքներ քննող անձի կողմից կայացված որոշմամբ ընդունվել է վարույթ, համարվել ներկայացված սկզբնական ներկայացման օրը և 20.11.2019թ.-ին որոշումը հրապարակվել www.gnumner.am կայքում:

26.11.2019թ.-ին և 06.12.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

## 2. «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«Պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով գեանշման հարցման ընթացակարգ:*

*1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով հրավերը հրապարակվել է 07.11.2019թ:*

*1.3 Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը 18.11.2019թ, ժամը 11:30:*

*1.4 Հայտերի բացման օր է սահմանված 18.11.2019թ, ժամը 11:30:*

*1.5 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊ ընկեյաությունը (հետայսու Ընկերություն) ուսումնասիրելով հրավերը տեխնիկական բնութագրում արձանագրել է*

*անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների հետ և պարզաբանման նպատակով հարցադրում էր ներկայացվել հրավերի տեխնիկական բնութագրի 1-ին և 2-րդ չափսաբաժինների վերաբերյալ:*

*1.6 Հարցադրումների վերաբերյալ տրվել են պատասխաններ, որոնք այնուամենայնիվ ըստ էության չեն պարզաբանում տեխնիկական բնութագրերում առկա սահմանափակող չափորոշիչների հիմնավորումները և օրենքով չնախատեսվող պահանջների առկայությունը, որոշ հարցադրումների վերաբերյալ ներկայացված տեսակետներև էլ տարընկալման հիմքեր են ստեղծում:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:»*

*Համաձայն՝ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.*

*1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում*

*2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում*

*3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:*

*Համաձայն Օրենքի 13-րդ հոդվածի «1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:*

*2.Գնման առարկայի բնութագրերը՝*

*1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.*

*2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.*

*3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.*

*4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:*

*3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:*

*4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ըեկալեչ պայմանագրի առարկան:*

*5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:*

*1-ին և 2-րդ չափաբաժիններով ներկայացված տեխնիկական բնութագրերի վերաբերյալ հանձնաժողովին ներկայացվել է հարցադրումներ, քանի որ դրանք կազմվել են սահմանափակումներով և վերոհիշյալ օրենքի խախտմամբ: Թեև պատվիրատուն երկու չափաբաժիններում էլ նշել է, որ «վերը նշված ցանկում ապրանքները պետք է լինեն նշված ապրանքատեսակի կամ համարժեք» այնուամենայնիվ պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացված են այնպիսի պարամետրերով, որոնց հավաքական ամբողջությունը կարող է ապահովել մեկ արտադրողի կողմից արտադրված մեկ ապրանքատեսակ (TRIMBLE, C5՝ էլեկտրոնային տախեոմետր և TRIMBLE R10-2 GPS սարք, TSC 3 կառավարման կոնտրոլլեր): Պատվիրատուն նշելով կամ համարժեք եզրույթը արտաքուստ կարծես թե առաջնորդվել է օրենքի 13-րդ հոդվածով, բայց ներկայացված*

*չափորոշիչները հնարավորություն չեն տալիս համարժեք ապրանքատեսակով մասնակցության հայտ ներկայացնել:*

*Ներկայացվում են առաջադրված հարցերը և պարզաբանումը.*

*Հարցադրում N 1՝*

*«Հարգելի հանձնաժողով, ծանոթանալով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրին և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով խնդրում եմ տրամադրել պարզաբանում 1-ին և 2-րդ չափաբաժինների վերաբերյալ:*

*Նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ներկայացված են այնպիսի չափորոշիչներով և գնային միջակայքով, որ մրցույթին կարող է մասնակցություն ապահովեն բացառապես մեկ արտադրող (Trimble) իր մեկ ապրանքատեսակով, քանի որ այլ արտադրողներ չեն ապահովում պահանջված չափորոշիչները հրավերով ներկայացված գնային միջակայքում:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագիրը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:*

*Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:*

*Նախ 1-ին չափաբաժնում հստակ նշված է արտադրող ընկերության անվանումը և ապրանքի մոդելը, որով խախտվում է վերոգրյալ նորմի պահանջը, օրենքի նպատակը և սկզբունքները:*

*Խնդրում եմ պարզաբանել-արդյոք «առնվազն 700մ առանց անդրադարձչի չափման հնարավորությամբ» պահանջը չի սահմանապակում այլ արտադրող ընկերությունների*

*հնարավոր մասնակցությունը, հավասար մրցակցությունը: Առաջարկվող գնային միջակայքը և տեխնիկական չափորոշիչները համապատասխանում են միայն Trimble ապրանքանիշի կողմից արտադրվող Trimble C5 մոդելին: Խնդրում եմ պարզաբանել այս չափանիշի համար արդյո՞ք հնարավոր չէ նշել միջակայք:*

*Առաջարկ-փոփոխել այդ չափորոշիչը և միջակայքն ընդլայնել, օրինակ 500-800 մետր, քանի որ հակառակ դեպքում այլ արտադրողներ նմանատիպ պարամետրերով և գնային միջակայքով ապրանքատեսակենր չեն կարող առաջարկել, այդ դեպքում կարծանագրենք, որ հայտարարված մրցույթին կարող է մասնակցել բացառապես Trimble ապրանքատեսակով հայտ ներկայացնողը:*

*Դիտարկում-նախկին մրցույթներով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ձեռքբերված նմանատիպ սարքերն ունեցել են 500 մետր 700մ առանց անդրադարձի չափման հնարավորություն և այն ընդունելի է եղել:*

*1-ին չափաբաժնի հետևյալ բնութագրի «երկկողմանի կառավարման էկրաններ, որոնցից առնվազն մեկը սենսորային» վերաբերյալ տրամադրել պարզաբանում արդյոք երկկողմանի կառավարման թվային, բայց ոչ սենսորային էկրանը համարվում է նմանատիպ հաշվի առնելով այն, որ ֆունկցիոնալ առումով այն նույնությամբ կատարում է բոլոր ֆունկցիաները, արձանագրելով ակնկալվող արդյունքը:*

*2-րդ չափաբաժնում նույնպես նշված է արտադրող ընկերության անվանումը և ապրանքի մոդելը, որով խախտվում է 13-րդ հոդվածի պահանջը, օրենքի նպատակը և սկզբունքները:*

*Պարզաբանել-պահանջվող «ոչ պակաս քան, ալիքների քանակը 600» չափորոշիչի փոխարեն, եթե առաջարկվի սարքավորում որն ապահովում է 452 ունիվերսալ ալիք, որոնք մուլտիֆունկցիոնալ են, արդյոք կդիտարկվի նմանատիպ և համարժեք:*

*Այն, որ տեխնիկական բնութագիրը ներկայացվել է Trimble արտադրողի համար, ևս մեկ անգամ հավաստվում է, որ այլ չափորոշիչով «Texas Instrumen t Sitara սերիա 3715 ARM Cortex-A8 (800Մhg)» այս սարքի պրոցեսորի մակնիշն իր հսկման սարքերում օգտագործում է միայն Trimble ապրանքնաիշը:*

*Պարգաբանել-մեր կողմից ներկայացվող սարքավորումն օգտագործում է այլ պրոցեսոր ավելի հզոր պարամետրերով 1 Գիգահերց հզորությամբ, ինչը ապահովում է ավելի հզոր աշխատանք, արդյոք այն կդիտարկվի համարժեք:*

*Պարգաբանել-«վերալիցքավորվող Li-Ion մարտկոցային բլոկ 11.14, 2600մԱժ, 28.9 4Ժ» սույն նկարագիրը մարտկոցի համար սահմանափակում է մրցակցությունը, քանի որ այլ արտադրողներ այլ պարամետրերի համադրմամբ կարող են ստանալ նմանատիպ արդյունք,*

*բայց ունենալ ավել կամ պակաս հզորություն հաշվի առնելով հոսանքի էներգիայի ծախսը: Արդյոք ներկայացված չափորոշիչներով սահմանափակումները նպատակ են հետապնդում մեկ արտադրողի մասնակցություն այս մրցույթին:*

*Պարզաբանել-2-րդ չափաբաժնով պահանջվող «տեսախցիկ 5 մեգապիկսել, ավտոֆոկուսով, սպիտակ СД կրկնակի լուսարձակով կամերա» փոխարեն, եթե առաջարկվում է համարժեք նույն պարամետրերով տեսախցիկը, բայց դեղնավուն լուսարձակի լապտերով և մեկ լուսարձակով, արդյոք կդիտարկվի համարժեք ելնելով այն իրողությունից որ ֆունկցիոնալ կիրառումից ապահովում է նույն ակնկալվող արդյունքը: Պարզաբանել-նշված է «հասկիչ սարքի վրա ուսդիոմոգեմ 2.4 ԳՀց» արդյոք համարժեք կգնահատվի, եթե ռադիոմոդեմը տեղակայված լինի ոչ թե հսկող սարքի վրա, այլ GPS կայանի, կրկին ելնելով այն իրողությունից, որ կիրառման դեպքում ապահովում է նույն արդյունքը, ինչ հսկիչ սարքի վրա տեղակայված լինելու դեպքում:*

*Պարզաբանել-«աշխատանքի ժամանակը 34ժ նորմալ պայմաններում, ամբողջական լիցքավորումը 3ժ», սույն չափորոշիչի անհրաժեշտությունը, չէ որ այն սահմանափակում է այլ արտադրատեսակ մատակարարների մասնակցությունը, քանի որ այդ պահանջը կարող է ապահովել միայն Trimble արտադրողը: Այդ ժամանակահատվածը իրականում չի կրում պրակտիկ կիրառելի բնույթ, քանի որ մասնագետը 34 ժամ դաշտում տվյալ հավաքագրելու ֆիզիկապես հնարավորություն չունի:*

*Առաջարկում ենք այս չափորոշիչը փոխել նշելով միջակայք, հնարավորություն ընձեռելով այլ մասնակիցների մրցույթի հայտ ներկայացնելու համար: Օրինակ միջակայք նշել 20-34 ժամ:*

*1-ին և 2-րդ չափաբաժինների բնութագրով նշված է, որ «Անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների արտադրողի (MAF - Manufacturer՝s Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում Լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer՝s Authorization Form) նամակ-լիազորադիր»:*

*Պարզաբանել արդյոք այս սահմանափակումն օրենքի խախտում չէ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է գնման առարկայի բնութագրերը, որի ուսումնասիրությունից չենք կարող արձանագրել, որ օրենքը պահանջ է ներկայացնում լիազորված կազմակերպության անունից հանդես գալու նախապայման:»*

*Վերոգրյալ հարցադրումների վերաբերյալ պատվիրատուն ներկայացրել է հետևյալ պարզաբանումը.*

*1. համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի («գնման առարկայի բնութագրերը պետք է համարժեք լինեն այն կարիքին, որի*

*բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»): Տեխնիկական բնութագրերում ներկայացված են ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների բավարարման համար անհրաժեշտ նվազագույն պարամետրերը չսահմանափակելով համարժեք և/կամ ավելի բարձր պարամետրերով սարքերի մատակարարման հնարավորությունը: ՊՆ-ի կարիքները տվյալ դեպքում հրապարակայնորեն մեկնաբանման ենթակա չեն, քանի որ պարունակում են պետական և ծառայողական գաղտնիք:*

*2. համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի տեխնիկական բնութագրելում որևէ առևտրային նշան կամ ֆիրմային անվանում նշելիս կիրառվել են «կամ համարժեք» բառերը:*

*3. 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում.*

*ա. «առնվազն 700մ առանց անդրադարձչի չափման հնարավորությամբ» պահանջը հիմնավորված է նախկինում 500մ ցուցանիշով սարքերի կիրառմամբ ի հայտ եկած խնդիրներից խուսափելու անհրաժեշտությամբ: Միաժամանակ նշեմ, որ տախեոմետրերի գրեթե բոլոր ապրանքանիշերի տեսականիների շարքերում առկա են 700մ և 700մ-ը գերազանցող ցուցանիշ ունեցող սարքեր,*

*բ. «երկկողմանի կառավարման էկրաններ, որոնցից առնվազն մեկը սենսորային» պահանջը ներկայացվում է ելնելով աշխատաժամանակի նվազեցման անհրաժեշտությունից սենսորային եկրանի օգտագործումը արագացնում է աշխատանքը:*

*4. 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում.*

*ա. «ոչ պակաս քան ալիքների քանակը 600» պահանջը ներկայացվում է հաշվի առնելով, որ չափման ճշտությունը և ազդանշանի ստացման արագությունը ուղիղ համեմատական են օգտագործվող ալիքների քանակին,*

*բ. «Texas Instrument Sitara սերիա 3715 ARM Cortex-A8 (300Մhg)» պահանջը հանդիսանում է պրոցեսորին վերաբերող նվազագույն պարամետր և ցանկացած համարժեք և/կամ Ձեր կողմից նշված 1 Գhg գերազանցող պրոցեսորը ընդունելի կլինի: Միաժամանակ նշեմ, որ վերը նշված տիպի պրոցեսոր օգտագործվում է առնվազն երկու ապրանքանիշի սարքերի մեջ,*

*գ. «վերալիցքավորվող Li-Ion մարտկոցային բլոկ 11.14> 2600մԱժ, 28.9 4ժ» և «տեսախցիկ 5 մեգապիկսել, ավտոֆոկուսով, սպիտակ ՀԴ կրկնակի լուսարձակով կամերա» պահանջները հանդիսանում են նվազագույն պահանջ և ընդունելի կլինեն դրանց համարժեք և/կամ գերազանցող պարամետրերով ցանկացած սարք: Միաժամանակ հայտնում եմ, որ նշված լուսարձակի «սպիտակ» բառը չի սահմանափակում սպիտակ գույնի «սառը սպիտակ» կամ «տաք սպիտակ» ընդունված կիրառման երանգները,*

*դ. հսկիչ սարքի կազմում «ռադիոմոդեմ 2.4 ԳՀz» ռադիոմոդեմի առկայության պահանջը ներկայացվել է ՊՆ կարիքների բավարարման նպատակով հսկման սարքը որպես առանձին շարժական սարք այլ սարքերի հետ օգտագործելու անհրաժեշտությունից ելնելով,*

*ե. «աշխատանքի ժամանակը 34ժ նորմալ պայմաններում, ամբողջական լիցքավորումը 3ժ» նվազագույն պահանջը համապատասխանում է ՊՆ կարիքների բավարարման պահանջներին:*

*5. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված MAF կամ DAF նամակ-հավաստագրերի պահանջը տարածվում է պայմանագրի կատարման (մատակարարման) փուլի վրա, հավաստում է ապրանքի որակը: Սարքի հետագա երաշխիքային սպասարկումը (նորոգումը, վերանորոգումը) արտոնագրված մասնագետների (սրահների) կողմից իրականացվում է միայն նամակ-հավաստագրերի առկայության դեպքում:*

*Միաժամանակ տեղեկացնում եմ, որ որակավորման փուլում պահանջվում է միայն հավաստում մատակարարման փուլում նշված նամակի ներկայացման վերաբերյալ:*

*Մեր կողմից տվյալ պահանջը չի սահմանափակում մատակարարվող ապրանքի ծագման երկիրը կամ արտադրող ընկերությունը: Ցանկացած կազմակերպություն կամ ֆիզիկական անձ, գնելով ապրանքը արտադրողից և/կամ ՀՀ-ում լիազորված կազմակերպությունից և/կամ այլ երկրներում պաշտոնական ներկայացուցիչներից կարող է ստանալ նշված նամակ-հավաստագրերը:*

*Նամակ-հավաստագրերի առկայության պահանջը ներկայացվում է ոչ բոլոր դեպքերում, այլ միայն հատուկ նշանակության սարքերի համար:*

*Այսպիսով, պատվիրատուն պարզաբանման 1-ին կետով հայտնում է, որ «տեխնիկական բնութագրերում ներկայացված են ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների բավարարման համար անհրաժեշտ նվազագույն պարամետրերը չսահմանափակելով համարժեք և/կամ ավելի բարձր պարամետրերով սարքերի մատակարարման հնարավորությունը:»*

*Հարց է առաջանում, եթե բնութագրով նշված է հառակ թիվ առանց միջակայք նշելու, ապա պաավիրաաուն ինչպես է գնահատում, որ չի սահմանափակում կամ նշում է անպիսի թվային շեմ, որ դիպուկ կարող է ապահովել մեկ արտադրող, որը համարժեք է իր առաջարկած գնային միջակայքի համար, իսկ նշված նվազագույն շեմից բարձր չափորոշիչով ապրանքատեսակը այլ գնային սահման ունի:*

*Պարզաբանման 3-րդ կետով հայտնում է, որ «500մ ցուցանիշով սարքերի կիրառմամբ ի հայտ եկած խնդիրներից խուսափելու անհրաժեշտությունից են առնվազն 700մ նշվել:» Ինչ վերաբերում է 500մ ցուցանիշի դեպքում ի հայտ եկած խնդիրներին դա ապացուցման անհրաժեշտություն ունի, իսկ նշելով 700մ դրանով իսկ սահմանափակվում է կամ համարժեք ապրանք ներկայացնելու հնարավորությունը: Իսկ այն դիտարկումը, որ տախեոմետրերի գրեթե բոլոր ապրանքանիշերի տեսականիների շարքերում առկա են 700մ-ը գերազանցող ցուցանիշ ունեցող սարքեր, ապա համամիտ ենք առկա են, սակայն պատվիրատուի ներկայացրած գնային տիրույթից ավելի բարձր արժեք ունեն:*

*Պարզաբանման 3-րդ կետի բ/ ենթակետի, 4-րդ կետի ա/, դ/, ե/ ենթակետերով ներկայացրած մյուս դիտարկումները պարզապես գնահատողական կարծիք են և ոչ ավելին, մինչդեռ այդ դիտարկումները պետք է ունենան գիտական ապացուցողական հենք, որպեսզի կասկածի տակ չլինի պետական միջոցներով կազմակերպվող մրցույթի օրինականությունը և այն չգնահատվի դիտավորության դրսևորմամբ հնարավոր մասնակիցների համար սահմանափակող:*

*Պարզաբանման 4-րդ կետի ե/ ենթակետի պատճառաբանությունն, այն որ*

*1 «աշխատանքի ժամանակը 34ժ նորմալ պայմաններում, ամբողջական լիցքավորումը 3ժ» նվազագույն պահանջը համապատասխանում է ՊՆ կարիքների բավարարման պահանջներին, կրկին պատվիրատուի սուբյեկտիվ վերաբերմունքն ու մեկնաբանությունն է, քանի որ աշխատանքի 34 ժամ չափորոշիչ ապահովում է միայն Trimble արտադրողը համապատասխան ապրանքատեսակով:*

*Ուշագրավ է, որ MAF կամ DAF նամակ-հավաստագրերի պահանջ օրենքը չի նախատեսում, պարզաբանման համար ներկայացված հարցադրման պարագայում հանձնաժողովը չի հիմնավորել, թե այդ նամակ-հավաստագրերի պահանջը որ նորմով է սահմանված: Ինչ վերաբերում է, որ դրանք ներկայացվելու են մատակարարման փուլում կամ դրանց առկայության պահանջը ներկայցվում է ոչ բոլոր դեպքերում, այլ միայն հատուկ նշանակության սարքերի համար հրավերի ռաումնասիրությունից չենք կարող գտնել հստակ ձևակերպում այդ մասին:*

*MAF կամ DAF նամակ-հավաստագրերը չեն հավաստում է ապրանքի որակը կամ սարքի հետագա երաշխիքային սպասարկումը:*

*Պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում օրենքով սահմանված նորմերին և հայտատուի համար ստեղծում են ապակողմնորոշող իրավիճակ:*

*Վիճարկվող հրավերով մասնակցությունն ըստ էության առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:*

*ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 22-րդ կետը սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:»*

*Պատվիրատուն օրենքին անհամապատասխան հրավեր ներկայացնելով սահմանափակում է հնարավոր հայտատու մասնակիցներին մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին:*

*Իրավական նորմերի խախտմամբ կազմված և ներկայացված հրավերը չի կարող ապահովել գնումների այն ընթացակարգը, որը նախատեսել է օրենսդիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրանց իրականացման համար ընդունված այլ իրավական ակտերով:»:*

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորեցնել չկայացած համարելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» գնանշման հարցման ծածկագրով ընթացակարգը և փոփոխել տեխնիկական բնութագրերը, համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին՝ բացառելով չհիմնավորված սահմանափակումները, որոնք խոչընդոտում են հնարավոր հայտատուների մասնակցությունը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» գնման ընթացակարգի վերաբերյալ պատվիրատուի՝ որպես այլընտրանք ներկայացրած համարժեք ապրանքների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ, Ընկերությունը հայտնել է հետևյալը.

*««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով հրավերի վերաբերյալ ներկայացված բողոքի առնչությամբ պատվիրատուն ներկայացրել է վիճարկվող չափաբաժինների, որպես այլընտրանք, համարժեք ապրանքների տեխնիկական բնութագրերը ներկայացնող բրոշյուրներ:*

*Ուսումնասիրելով ներկայացվածը՝ հայտնում ենք, որ պատվիրատուի կողմից ներկայացվել են մի քանի մոդել էլեկտրոնային տախեոմետրի բնութագրեր, որպես 1-ին չափաբաժնին համարժեք, որոնք ըստ պատվիրատուի հանդիսանում են համանման և արտադրված են այլ ընկերությունների կողմից և ոչ «Trimble» ընկերության կողմից:*

*Ստորև ներկայացնում ենք մեր ուսումնասիրության արդյունքները.*

*Nikon XF և Spectra Focus 3 էլեկտրոնային տախեոմետրը ներկայացված է որպես այլ արտարողի արտադրանք, սակայն իրականում հանդիսանում են «Trimble» արտադրանք:*

*Որպես հիմնավորում ներկայացնում ենք ՌԴ-ում տրամադրված սարքի որպես չափման միջոց գրանցման վկայականի պատճեն: Որտեղից երևում է, որ Nikon մակնիշի տախեոմետրերն արտադրվում են «Trimble» ընկերության կողմից կամ արտադրվում են համատեղ:*

*Spectra Focus 3-ի գովազդային բրոշյուրից երևում է, որ այն նույնպես արտադրվում է «Trimble» կողմից:*

*Leica TS07-ի շուկայական արժեքը գերազանցում է Trimble C5 ի արժեքը 40% ով և գտնվում է այլ գնային սեգմենտում: Leica TS03 մոդելն աշխատում է միայն 500 մետր առանց անդրադարձիչի ռեժիմում և չունի սենսորային էկրան (կից ներկայացնում ենք բրյոշուրը՝ տեխնիկական բնութագրով):*

*Pentax W-2802N տախեոմետրը համապատասխանում է վիճարկվող տեխնիկական բնութագրին, սակայն արտադրողը տրամադրում է միայն մեկ տարվա երաշխիք, սակայն պատվիրատուն վիճարկվող տեխնիկական բնութագրով էլեկտրոնային տախեոմետրի (անդրադարձիչ, ձող եռոտանի) համար պահանջում է 2 տարվա երաշխիքի հավաստում:*

*Geomax Zoom70 accXXess10 մոդելը ռոբոտացված տախեոմետր է, որի արժեքը ավելի քան կրկնակի թանկ է «TRIMBLE C5 »-ից, քանի որ դրանք հանդիսանում են տարբեր դասի ապրանքներ: Բացի այդ նշված արտադրատեսակն այս պահին չի վաճառվում, դրա վաճառքի սկիզբը նախատեսված է 2020 թվականի դեկտեմբերից:*

*2-րդ չափաբաժնի մասով ներկայացված օրինակների ուսումնասիրության արդյունքները.*

*Renger 3 կոնտրոլերը նույնպես արտադրվում է «Trimble» կողմից ինչը երևում է բրոշյուրում:*

*Leica CS20, Leica CS35 աշխատաժամը կազմում է համապատասխանաբար 8 և 14 ժամ, իսկ պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրում պահանջվում է 34 ժամ, պաշտպանության դասը՝ IP65, տեխնիկական բնութագրում նշված է IP67:*

*Topcon The Allegro 2 կոնտրոլերի աշխատաժամը 20 ժամ է, իսկ պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագով պահանջվում է 34 ժամ:*

*E-survey UT 50 կոնտրոլերի աշխատանքային ջերմաստիճանը -20°C +55°C, տեխնիկական բնութագրում պատվիրատուն պահանջում է -30°C +60°C և E-survey UT 50 կոնտրոլերը չունի (WebUI) վեբ ինտերֆեյս, որը պահանջվում է պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրով:*

*E-survey E 800 GNSS համակարգն ունի միայն 336 ալիքի հնարավորություն, իսկ վիճարկվող չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է 600:*

*Stonex S10A GNSS համակարգի տեխնիկական չափորոշիչները համապատասխանում են պատվիրատուի տեխնիկական բնութագրին, սակայն նույն արտադրողի կողմից արտադրված բոլոր կոնտրոլեր սարքերի առավելագույն աշխատաժամը կազմում է 10 ժամ: Քանի որ կա ծրագրային ապահովման համադրելիության խնդիր և վերոնշված մոդելի GNSS սարքը չի աշխատի այլ արտադրողի կողմից արտադրված կոնտրոլերով, ապա որպես 2-րդ չափաբաժնի համար տարբերակ այն հնարավոր չէ առաջարկել:*

*TRIUMPH-LS GNSS նույնպես համապատասխանում է պատվիրատուի ներկայացրած տեխնիկական պայմանին, սակայն արտադրողը չունի տեխնիկական բնութագրով նախատեսված կոնտրոլեր սարք իր ապրանքատեսականիում:»:*

**3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 21.11.2019թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 18.11.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 26.11.2019թ.-ին թիվ Մ-53008-2019 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ի պատասխան Ձեր 21.11.19թ. թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19242-2019 գրությամբ ներկայացված ՀՀ ՊՆ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով անցկացված գնման ընթացակարգի վերաբերյալ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի՝ հայտնում եմ հետևյալը.*

*1. «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի 1.5 կետում նշված է, որ ընկերությունը արձանագրել է անհամապատասխանություն և պարզաբանման նպատակով հարցադրում էր ներկայացվել հրավերի տեխնիկական բնութագրի 1-ին և 2-րդ չափաբաժինների վերաբերյալ, այն դեպքում երբ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական բնութագրի վերաբերյալ սահմանված ժամկետներում պարզաբանման դիմում չի ներկայացվել, ավելին՝ նշված մրցույթին տվյալ ընկերությունը մասնակցության հայտ չի ներկայացրել:*

*2. Բողոքի մեջ նշված՝ պարզաբանման 1-ին կետով ներկայացվածի վերաբերյալ կրկին հիշեցնում ենք.*

*համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 2-դ կետի 3-րդ ենթակետի («գնման առարկայի բնութագրերը պետք է համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»)՝ տեխնիկական բնութագրերում ներկայացված են ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների բավարարման համար անհրաժեշտ նվազագույն պարամետրերը՝ չսահմանափակելով համարժեք և/կամ ավելի բարձր պարամետրերով սարքերի մատակարարման հնարավորությունը:*

*Պաշտպանության նախարարության կողմից գեոդեզիական սարքերի շահագործման պայմանները՝ չափվող հեռավորությունների բնույթը, տեղանքի տեսակը, աշխատակիցների քանակը, աշխատաժամերը, չափման պահանջվող ճշտության աստիճանը, դրանք այլ սարքերի հետ օգտագործումը և այլ նախապայմանները հրապարակայնորեն մեկնաբանման և քննարկման ենթակա չեն, քանի որ պարունակում են պետական և ծառայողական գաղտնիք:*

*1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված են «առնվազն 700մ առանց անդրադարձչի չափման հնարավորությամբ» բառերը, ինչը հանդիսանում է նվազագույն պահանջ և ընդունելի կլինեն դրանց համարժեք և/կամ գերազանցող պարամետրերով ցանկացած սարք: Անդրադարձիչի, անդրադարձիչի ձողի և փայտյա եռոտանու պարամետրերի արժեքները տված են տիրույթներով՝ կարիքների համարժեք բավարարման համար:*

*2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերում հստակ նշված են. «Պարամետրերը ոչ պակաս քան.» բառերը, որոնցից հետո թվարկվում են պարամետրերի ընդունելի նվազագույն արժեքները:*

*3. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի՝ տեխնիկական բնութագրերում որևէ առևտրային նշան կամ ֆիրմային անվանում նշելիս կիրառվել են «կամ համարժեք» բառերը:*

*4. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, ուստի «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն չի կարող բողոքարկել իր կողմից նշված «գնային միջակայքի» կամ «գնային տիրույթի» արժեքից՝ սարքերի գնային արժեքները սահմանափակ չեն: Նույնիսկ ֆինանսական միջոցների առկայության դեպքում, սարքերի տեխնիկական բնութագրերում պահանջվող նվազագույն պարամետրերը (ցուցանիշները) չէին փոփոխվի:*

*Տրամաբանական է, որ ցանկացած պատվիրատու ձգտում է ունենալ լավագույն ապրանքը՝ նվազագույն գնով: Ինչու՞ ՀՀ պաշտպանության նախարարությունը պետք է ձեռք բերի իր կարիքներին չբավարարող՝ ցածր պարամետրերով սարքեր:*

*5. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված MAF կամ DAF նամակ-հավաստագրերի պահանջը տարածվում է պայմանագրի կատարման (մատակարարման) փուլի վրա, դրանով հավաստվում է ապրանքի որակը:*

*Հավաստվում է սարքի ծագումը (ո՛չ թե ծագման երկիրը), ինչը թույլ է տալիս խուսափել անորակ ապրանքների մատակարարումից: Սարքի հետագա երաշխիքային սպասարկումը (նորոգումը, վերանորոգումը) արտոնագրված մասնագետների (սրահների) կողմից իրականացվում է միայն նամակ-հավաստագրերի առկայության դեպքում:*

*Միաժամանակ տեղեկացնում եմ, որ որակավորման փուլում պահանջվում է միայն հավաստում՝ մատակարարման փուլում նշված նամակի ներկայացման վերաբերյալ:*

*Մեր կողմից տվյալ պահանջը չի սահմանափակում մատակարարվող ապրանքի ծագման երկիրը կամ արտադրող ընկերությունը: Ցանկացած կազմակերպություն կամ ֆիզիկական անձ, գնելով ապրանքը արտադրողից և/կամ ՀՀ-ում լիազորված կազմակերպությունից և/կամ այլ երկրներում պաշտոնական ներկայացուցիչներից կարող է ստանալ նշված նամակ-հավաստագրերը:*

*Նամակ-հավաստագրերի առկայության պահանջը ներկայացվում է ոչ բոլոր դեպքերում, այլ միայն հատուկ նշանակության սարքերի համար:*

*6. «Գնումների մասին» ՀՀ Օրենքի հոդված 50-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի համաձայն՝ «եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախավորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը»՝ տվյալ ընթացակարգի վերջնաժամկետը սահմանված է եղել 18.11.2019թ. ժամը 11:30-ին, իսկ բողոքը ներկայացվել և վարույթ է ընդունվել 19.11.2019թ.-ին: Մեր դիրքորոշմամբ՝ բողոքը ենթակա չէ քննարկման:»:*

**4. <u>ԳԲՔԱ-LO-2019/94 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գեոդեզիական գործիքների, նավիգացիոն սարքերի և աշխատանքային կայանի ձեռքբերման նպատակով 07.11.2019թ. հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 18.11.2019թ.-ի ժամը 11:30-ը:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

| Հ/Հ | Գնման ենթակա ապրանքների անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 1 | Գեոդեզիական գործիքներ /Տախեոմետր էլեկտրոնային, անդրադարձիչով/ | Տախեոմետր էլեկտրոնային, անդրադարձիչով: Լրակազմի մեջ մտնում են. Trimble M3 DR 5″ մակնիշի կամ համարժեք տախեոմետր, որի աշխատանքը պետք է համատեղելի լինի Trimble M3 DR 5″ ծրագրային արտոնոգրված համակարգի հետ, անդրադարձիչ (պրիզմայի տրամագիծը՝ 50-70 մմ, հանգույցային կետը՝ 0-ից մինչև -30մմ տիրույթում), անդրադարձիչի ձող (հարթաչափով, աշխատանքային բարձրությունը՝ 140-260սմ), տրեգեր, սարքի տեղադրման համար նախատեսված հարթ հարթակով փայտյա եռոտանի (NEDO200100, YGM180H կամ SJW30 մակնիշի կամ համարժեք. նվազագույն օգտակար բարձրությունը՝ ոչ պակաս 1,0 մ, առավելագույն օգտակար բարձրությունը՝ ոչ պակաս 1,6 մ), համալրված երկու մարտկոցով (վերալիցքավորվող), մարտկոցների համար մեկ լիցքավորման սարք՝ 220Վ 50Հg միացման հնարավորությամբ, համակարգչին միացման մալուխ՝ USB համակցիչով, շահագործման հրահանգ CD սկավառակակրիչով, կտորե պաշտպանիչ ծածկոց, տեղափոխման կոշտ պլաստիկից ճամպրուկ: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր և օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin): Երաշխիքային շահագործման ժամկետը՝ առնվազն 2 տարի: |
| 2 | Գեոդեզիական գործիքներ /Տեղանքի տարբեր մասշտաբի եռաչափ նկարահանող սարք՝ ինքնուրույն տեղակապակցման հնարավորությամ/ | Տեղագրական հանույթի և գեոդեզիական չափագրումների համար նախատեսված, արդյունքների արտահանման և մշակման ծրագրային ապահովմամբ աերոնկարահանման և մոնիտորինգի միասնական համալիր է, որում ներառված են աերոնկարահանող սարքը և օդային մոնիտորինգի համակարգը:<br>**<u>Աերոնկարահանող սարքը՝</u>** DJI Phantom 4 RTK մակնիշի կամ համարժեք, որի աշխատանքը պետք է համատեղելի լինի Pix4D Mapper և FOTOMOD ծրագրային փաթեթների հետ: Պարամետրերը ոչ պակաս քան. նկարահանման առավելագույն տևողության արժեքը՝ ոչ պակաս քան 30 րոպե, աշխատանքային տիրույթը՝ 2,4-2,483ԳՀg, կապակցման ճշտությունը. ուղղահայաց՝ ±1,5սմ, հորիզոնական՝ ±1սմ, նկարահանող սարքի թուլատրելիությունը՝ 20Մպկս, համալրված 1″ CMOS սենսորով, 4K նկարահանման հնարավորությամբ, ելքային ֆայլերը JPEG ֆորմատի, թռիչքի ծովի մակարդակից առավելագույն բարձրության արժեքը՝ ոչ պակաս քան 6000մ, թռիչքի առավելագույն արագության արժեքը՝ ոչ պակաս քան 72կմ/ժ, աշխատանքային ջերմաստիճանը. -6$^0$-ից +40$^0$C: Կազմի մեջ մտնում է. աերոնկարահանող սարք, շարժական D-RTK 2 կայան, որը համատեղելի է ՀՀ և ԱՀ տարածքում գործող ռեալ ժամանակում աշխատող ռեֆերենս ցանցի հետ, ղեկավարման վահանակ՝ գունավոր էկրանով, առնվազն չորս պրոպելեր, ինտելեկտուալ երկու հիմնական լիզքավորվող մարտկոց, մարտկոցների լիցքավորման սարք, սնուցման բլոկ, սնուցման լար, ղեկավարման վահանակի լիցքավորվող մարտկոց և լիցքավորիչ, micro USB և USB լար, 16Գբ micro SD քարտ, տեղափոխման կոշտ պլաստիկից ճամպրուկ:<br>**<u>Օդային մոնիտորինգի համակարգը՝</u>** Matrice 210 RTK կամ համարժեք, որի աշխատանքը պետք է համատեղելի լինի Pix4D Mapper և FOTOMOD ծրագրային |

| | | |
|---|---|---|
| | | փաթեթների հետ: Պարամետրերը ոչ պակաս քան. չորս պրոպելեր, ներկառուցված երկու RTK կայան, որոնք համատեղելի են ՀՀ և ԱՀ տարածքում գործող ռեալ ժամանակում աշխատող ռեֆերենս ցանցի հետ, նկարահանման առավելագույն տևողության արժեքը՝ ոչ պակաս քան 32 րոպե, աշխատանքային տիրույթը՝ 2,4-2,483ԳՀց, կապակցման ճշտությունը. ուղղահայաց՝ ±10սմ, հորիզոնական՝ ±30սմ, թռիչքի ծովի մակարդակից առավելագույն բարձրության արժեքը՝ ոչ պակաս քան 2500մ, թռիչքի առավելագույն արագության արժեքը՝ ոչ պակաս քան 23մ/վրկ, աշխատանքային ջերմաստիճանը. -20$^0$-ից +45$^0$C, նկարահանող մասը (տեսախցիկը)՝ Zenmuse X5S կամ համարժեք, որի պարամետրերը ոչ պակաս քան. նկարահանման թուլատրելիությունը՝ 20,8Մպկս, 4K նկարահանման հնարավորությամբ, մատրիցա CMOS 4/3՝՝, ելքային ֆայլերը DNG, JPEG, DNG+JPEG, RAW, ProRes, MOV, MP4 ֆորմատների: Կազմի մեջ մտնում են. լիցքավորվող մարտկոց - 2 հատ, լիցքավորման սարք - 2 հատ, ղեկավարման վահանակ գունավոր էկրանով, տեղափոխման կոշտ պլաստիկից ճամպրուկ:<br>Համալիրը ներառում է նաև տվյալների ֆոտոգրամետրիկ մշակման Pix4D Mapper ծրագրային արտոնագրված փաթեթ: Համալիրը պետք է լինի նոր և չօգտագործված: Անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների արտադրողի (MAF - Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF - Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր և օրիգինալության հավաստագիր (Certificate of Origin): Երաշխիքային շահագործման ժամկետը՝ առնվազն 3 տարի: |

## 5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 18.11.2019թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային,

թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին,

ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների

ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանված պահանջները ապահովում են մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը, չեն սահմանափակում ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը, հիմնված են գնման գործընթացի մրցակցային, համաչափ, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա:

1-ին և 2-րդ չափաբաժինների վերաբերյալ Պատվիրատուի կողմից գործի քննության ընթացքում ներկայացվեցին համապատասխան ապացույցներ, առ այն, որ պահանջված ապրանքատեսակների հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանում են Leica TS07 և TRIUMPH-LS GNSS ապրանքատեսակները:

Leica TS07 ապրանքատեսակի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրին համապատասխանելու վերաբերյալ փաստի մասին Ընկերությունը նշել է նաև իր

դիրքորոշմամբ: Իսկ ինչ վերաբերում է այդ ապրանքատեսակի շուկայական արժեքի Trimble C5 ապրանքատեսակի արժեքի 40%-ով գերազանցմանը և այլ գնային սեգմենտում գտնվելուն, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ արժեքի գերազանցման հանգամանքը չի կարող գնահատվել, որպես այնպիսի էական նշանակություն ունեցող փաստ, ըստ որի կարելի կլիներ արձանագրել հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ չապահովելու հանգամանքը, ըստ այդմ էլ՝ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի դրույթների խախտումը: Օրենքի նշված դրույթի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ գնման առարկայի բնութագիրը պետք է ապահովի ոչ թե մեկից ավելի հայտի ներկայացման պարտադիր պայման կամ ապահովի գնային սույն սեգմենտում գտնվող ապրանքների ներկայացման հնարավորություն, այլ պետք է ապահովի հնարավոր մասնակիցների հայտ ներկայացնելու հնարավորություն:

TRIUMPH-LS GNSS ապրանքատեսակի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրին համապատասխանելու փաստի մասին Ընկերությունը նշել է նաև իր դիրքորոշմամբ և հավելել, որ արտադրողը չունի տեխնիկական բնութագրով նախատեսված կոնտրոլեր սարք իր ապրանքատեսականիում: Նշվածի հետ կապված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ TRIUMPH-LS GNSS ապրանքատեսակի տեխնիկական բնութագրի ուսումնասիրության արդյունքում, պարզ է դառնում, որ այն, թեև այնուամենայնիվ ունի կոնտրոլեր սարք, սակայն հրավերով 2-րդ չափաբաժնի համար ապրանքի կոնտրոլեր սարք ունենալու պահանջ և պայման առկա չէ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ գնման ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջները հիմնավոր են և չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքները:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

Ուստի, ելնելով վերագրյալներից, Բողոքներ քննող անձը գտնում է, որ բողոքն ենթակա է ամբողջությամբ մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 18.11.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/94 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**